



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Քաղ. Երևան

10 հուլիսի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի

Անդամակցությամբ՝ Հ. Նազարյանի

Ա. Խաչատրյանի

Քննության առնելով Սերյոժա Միմոնյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Սերյոժա Միմոնյանը 2017թ. հունիսի 22-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի 5-րդ, 6-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.03.2017թ. որոշման մեջ տեղ գտած մեկնաբանությամբ, որ անկախ կողմերիս միջև պայմանագրի առկայությունից կամ բացակայությունից, պարտականությունները կատարելուց կամ չկատարելուց, աղբահանության վճարը պարտադիր է, ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի ուժով բռնագանձման ենթակա՝ հավասարեցված հարկերին, տուրքերին և այլ վճարումներին, ճանաչել ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասին հակասող՝ հակասահմանադրական»:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ.

1. Դիմողը նշում է, որ դատարանները, մեկնաբանելով վիճարկվող դրույթները, եզրահանգել են, որ կողմերի միջև պայմանագրի առկայության կամ բացակայության հանգամանքից և աղբահանության պատշաճ իրականացումից անկախ աղբահանության վճարը պարտադիր է:

Դիմողի կարծիքով՝ այն իրավիճակը, երբ սուբյեկտը պետք է կատարի աղբահանության համար վճարելու իր պարտականությունը՝ անկախ աղբի առկայությունից կամ համապատասխան ծառայության կողմից փոխադրված չլինելու հանգամանքից, հակասահմանադրական է, ինչի արդյունքում խախտվում է անձի սեփականության իրավունքը:

2. «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) համապատասխան դրույթների վերլուծությունը վկայում է, որ համապատասխան սուբյեկտի՝ աղբահանության դիմաց որոշակի վճարումներ կատարելու պարտականությունը սահմանվում է օրենքով, աղբահանության աշխատանքները նախապես ֆինանսավորվում են համայնքի կողմից, իսկ այնուհետև աղբահանության համար գանձվող գումարներն ուղղվում են համայնքային բյուջե կամ արտաբյուջե, հետևաբար՝ այս ոլորտում առաջացած հարաբերությունները քաղաքացիաիրավական բնույթ չեն կրում և չեն առաջանում պայմանագրի հիման վրա:

Վերոշարադրյալի համատեքստում դիմողի փաստարկներն առ այն, որ «անկախ կողմերիս միջև պայմանագրի առկայությունից կամ բացակայությունից աղբահանության վճարը պարտադիր է», ակնհայտ անհիմն են և սահմանադրաիրավական վեճ չեն առաջացնում:

Բացի դրանից, օրենքի 20-րդ հոդվածը՝ ամրագրելով աղբահանության վճար վճարողների հիմնական իրավունքները և պարտականությունները, ի թիվս այլնի, նախատեսում է, որ համապատասխան սուբյեկտներն օրենքով սահմանված կարգով իրավասու են բողոքարկել աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման՝ իրեն վերաբերող գործողությունները, ինչպես նաև համայնքից, օպերատորից կամ կազմակերպությունից պահանջել աղբահանությունը կազմակերպողի պարտավորությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով սեփական միջոցների հաշվին կատարած

աղբահանության ծախսերի հատուցում: Այսինքն, օրենսդիրը, սահմանելով համապատասխան սուբյեկտի՝ աղբահանության դիմաց որոշակի վճարումներ կատարելու պարտականությունը, միաժամանակ որոշակի երաշխիքներ է նախատեսում այն առումով, որ եթե աղբահանության վճար վճարողն իր հաշվին է իրականացնում աղբահանություն այն կազմակերպողի կողմից պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու հետևանքով, աղբահանության վճար վճարողին հնարավորություն է տրվում օրենքով նշված սուբյեկտներից պահանջելու սեփական միջոցների հաշվին կատարած ծախսերի հատուցում: Հետևաբար, դիմողի փաստարկն առ այն, որ համապատասխան վճարումներ կատարելու պարտականության ծագումը պետք է պայմանավորված լինի աղբի առկայությունից կամ համապատասխան ծառայության կողմից այն փոխադրված լինելու հանգամանքից, ակնհայտ անհիմն է և սահմանադրաիրավական վեճ չի առաջացնում:

Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս, ի թիվս ըստ ձևի ներկայացվող պահանջների կատարման, անձը պետք է հստակ պատկերացնի իր նկատմամբ վերջնական դատական ակտով կիրառված օրենքի նորմի բովանդակությունը և փորձի գնահատել ու նախատեսել Սահմանադրական դատարանում իր իրավունքների պաշտպանությանն ուղղված և Սահմանադրությամբ ու օրենքով թույլատրելի հետագա գործողությունները, ինչպես նաև պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ է ակնկալում Սահմանադրական դատարանում դիմումի քննության արդյունքում:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված՝ վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջն ինքնանպատակ չէ: Համաձայն դրա՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով, ինչը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև, պահանջ, որին չի բավարարում խնդրո առարկա անհատական դիմումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Սերյոժա Սիմոնյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

10 հուլիսի 2017 թվականի
ՄԴԴԿՈ/2-16